գրով ԺԱ, «Վասն էր ոչ գոյ ոչխարաց քօդայ յաշխարհին, որ Արաղստան կոչի» վերնագրով ԺԵ, «Պատմութիւն վասն գերեզմանին և ոսկերացն Վարդ Պատրկայ» վերնագրով ԼԶ, «Պատմութիւն վասն սատակման պիղծ Չոմարին» վերնագրով Խ և «Պատմութիւն վասն սատակման Սուլէյման բէկին» վերնագրով ԽԱ գլուխները:

Վերջին երկու գլուխ-զրույցները ճյուղավորումներ են «Պատմութիւն և պատճառք կողոպտելոյ զանուանի վանքն Վարագ կոչեցեալ. և տանելոյ զաւագ սուրբ Նշանն ի բերդն Խօշաբայ և դարձուածանելոյ անտի ի Վան քաղաք» վերնագրով ԼԸ գլխի և գունեղ ու տպավորիչ մանրամասներով ներկայացնում են Վարագա վանքի կողոպտիչների՝ Չոմարի ու Սուլեյման բեկի անփառունակ վախճանը: Դրանք Արմենուհի Սրապյանը համարում է «Բանավոր աղբյուրներից գրի առած, բայց հեղինակի ակտիվ միջամտությամբ ու շեշտված անհատականությամբ պատմված»[19] զրույցների օրինակներ:

Գլուխ-զրույցներում իրադարձությունների հոսքը ներկայացվում է առավել կոնկրետ ու կենտրոնացված, շեղումները գրեթե բացառվում են, իսկ ներտեքստային կառուցվածքային միավորները և, հատկապես, ծրագիր-խոստում միավորը[20], իսպառ բացակայում են: Այս ամենի արդյունքում՝ գլուխ-զրույցները թեպետ զուտ տեղեկատվական առումով լույս են սփռում վկայագրված իրադարձությունների վրա, բայց շատ առումներով դառնում են տեքստային ներփակ տարածք:

Պատմագրության ժանրային տարածքում ընդգրկվելով՝ զրույցը երբեմն ձեռք է բերում այնպիսի նոր հատկանություն-

---

19 ***Արմենուհի Սրապյան,*** Հայ միջնադարյան զրույցներ, էջ 80:

20 Այդ միավորների մասին մանրամասն տե՛ս մեր «Ներտեքստային կառուցվածքային միավորները Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունում» հրապարակումը, «Գրականագիտական հանդես», Ա-Բ, 2007, էջ 12–22, ինչպես նաև սույն աշխատության «Ներտեքստային կառուցվածքային միավորների բնույթը» ենթագլուխը: